

**«ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՔՈՒՅՐ-ԼԱԲՈՐԱՆՏԻ (1 ԴՐՈՒՅՔԱԶԱՓ) ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ**

Բուժքրոջ տեղի համար վարձատրությունը նախատեսվում է մեկ դրույքաչափ:

Մրցույթը կկայանա մեկ փուլով:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է,
2. Փաստաթուղթ (պետական նմուշի դիպլոմ) որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը, հանրային ծառայության համարանիշը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեր, հավաստագրերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի: Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հունիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա հունիսի 11-ին՝ ժամը 15-ին, 'Տաշիրի բժշկական կենտրոն' ՓԲԸ-ում: Հասցեն՝ ք. Տաշիր, Գրիբոյեդովի 3: Հեռ.՝ (0254) 2-21-16, 2-21-46: ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ